

ծածկած , և հոն տարւոյն ամէն եղա-
նակներուն մէջ կը ծաղկին ու պտուղ
կուտան թէ խաղողը , թէ դեղձը , թէ
անանասը և թէ ուրիշ շատ փափուկ բոյ-
սեր : Վարնջենիներու ճիւղերուն վրայ
այնչափ առատ է պտուղը , որ մարդ կը
զարմանայ թէ խլանտայի պէս ցուրտ
օդ ունեցող երկրի մը մէջ ինչպէս ա-
ռաջ կրնայ գալ այնպիսի բոյսը : Մէջ-
տեղի պարտէզին մէջ պտղի ծառեր , ու
զանազան անպտուղ և բարձր ծառեր
տնկած են : Իսկ վարինին մէջ ամէն
տեսակ բոյսեր կը գտնուին :

Մէկ պարտէզէն մէկալը ելլելու հա-
մար չորս ոտնաչափ լայնքով սանդուխ
մը կայ : Սրայի պարտէզին երկայնու-
թիւնը 150 ոտք է , լայնութիւնը 30 ,
մէջտեղինին երկայնութիւնը 180 ոտք ,
իսկ լայնքը 40 : Սարինին երկայնու-
թիւնը 200 ոտք , իսկ լայնութիւնը 100 :

Ղանապարհորդները խիստ կը գո-
վեն աս պարտէզները . և ասոնք շինե-
լու համար եղած ծախքը տասնըհինգ
հազար լիւրէ ստերլին եղեր է , որ զրե-
թէ չորս հարիւր հազար ֆրանք կ'ընէ :

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն

Մ Կ Լ Ե Լ Է :

ԼՄՊՔ թօննկէցք յահեղ շանթից 'ի գուպար
Բասուերախիտ զերկնիւք սփռեն քօղ խաւար ,
Լէրածուք հորիզոնին 'ի ծագաց
Լղջամրղինք տարածանին թւք մրկաց .
Լնդ հողմակոծ ծայրից ծառոց սօսափին
Սայրադ վագեր ըսպառնալեաց մրռնչին ,
Խառն ընդ ճայթմունքս կայծականց հեռաւոր
Յարուցանեն յերկրի տաղնապս ահաւոր :
Պարտոխաթափ Լայէն քինուն զրժոխոց
Սանտ յապաժոյժ քրտանց թացեալ դէմն և ծոց ,
Յերկնատեղացն յառեալ 'ի հուր՝ յեց 'ի բահ ,
“ Հիմ շանթահար , գոչէ , չառնես զիս Տէր , ահ .
Նամը են ինձ կեանքս այս , ինձ զրժոխք բացցին օն ,
Պրծուծ պաստառք զանձն իմ ծածկել չեն ըմբօն .
Լա ձեռքս յամառ 'ի ծուխ քրտանց եռանդուն
Յէրբ գործեսցեն անխոնջ զերկիր անբեղուն :
Լրնոջըս ծոց ցամաքեցաւ չըւառին ,
Սովալըլուկ հաց , հաց գոչէ մանկրտին :
Սասն իմ ոչ ինչ , զամէնն եղբօրս յաջողեր ,
Սանկունք նորին մարբն և հարբ գան 'ի վրսեր ,
Սյբ ըզգեստուցն 'ի պաճուճանքս խրոխտան ,
Լա անդէոյ նոցին անթիւ է հօրան :
Լը ինձ և զայս կըսկիծ . զի հուր բոց երազ
Խջեալ յերկնից սրբէ զնորին պատարազ .
Խակ զիս ատեան երկինք , և հուրըն ծախիչ՝
Խմ նըւիրացս և սեղանոյս է խոտիչ :
Սարսեաց , երկիր Լբէլ , հարից ըզքօ կար ,
Լա զուարճացայց լուծեալ ըզվրէժ կամակար ,” :

Լուեայ Կայէն , յանկարծ ցեղաւ պարզ այեր ,
 Ճաճանչ հատաւ մինչ արեգակըն ծագէր ,
 Ընդէն և անդ ըզգնացս արգել մըրըրկին
 Շող փայլակեաց էջ յԼճեւայ ճակատին :
 Ո՛հ 'ի ճակատ քո սուրբ , որդեակդ Բքամայ ,
 Շնորհք լաւութեան անճառ գեղով լուսանայ ,
 Արտիւ խայտաս լիապատար հրճունօք
 Ար սիրելեաց են Բարձրելոյն տըւեալ ձօնք .
 Դաշնակաւոր սըրընգիդ քաղցըր նուազ
 Վան ըզմեղուի մթերս ամբարոց անուշակ :
 Վառանց ուլանց ըզքե տըւեալ դուոյթ 'ի թինդ
 Յերանութիւն հովուիդ կայտուն մեծախնդ :
 Լըկիր 'ի տես սիրելոյն եւ 'ի կաքաւ ,
 Բուրազըւարճ և ծաղկազգեստ ժպտեցաւ
 Վարչապարացդ առեալ տենչիւ ըզսուրբ հետք :
 Իսկ նա զԿայէն տեսեալ դիմէ ահաբեկ .
 « Լըբայր , գոչէ , եղբայր լինիմք զրկածու :
 — Ի բաց , օձ չար , զինե պատե՛լ կամիս դու .
 — Փութա՛ , եղբայր , 'ի մըրըրկէս փախիցուք .
 — Ի ցասմանէս մանաւանդ լեր խուսափուկ .
 — Օհնչ մեղայ քեզ . ահա ստացուածք իմ , ընկալ .
 — Սաստակաբեկ կորեայց , քան քե ճոխանալ .
 — Կարդա՛ առ Տէր , և ատոք զանդըս գտցես .
 — Ի՛հ , զիս մերժեաց Տէր , իբրու զքեզ մերժեմ ես .
 — Ո՛հ , այդ նախանձ քո մեծ ոճիր է , եղբայր .
 — Սեղք Բքամայ որ թըշուառաց եղև հայր .
 — Կարկեաց , յանդուգըն , հօր կարգաս դու անէծ .
 — Լա դու պանդոյր , ինձ սաստես , վրէժ լուծցես մեծ . . .
 Տրոփեաց դոփմամք , կըշուեաց ըզձեռն ապիրատ
 Հարուած սաստիկ էջ յԼճեւայ սուրբ ճակատ .
 Ը՛հ , անկաւ նա , Տէր . . . և առ քեզ պաղատի ,
 Երէ եղբօրն յետին յաչացն ահնարկի : —
 Լալըսպանչին դէմք հարկանին 'ի դալկան
 Կրթի յապուշ , քստմունք յոսկերս ընթանան ,
 Ղողան դաստակք , պատէ զնովաւ ահ տըխուր
 Վօղ առնուն աչք և ատամունք ըզսարսուռ :
 Օարհուրագին դիսակք 'ի վեր դիզանան ,
 Սարսի խըղձիւ իբր հողմահար անդաստան :
 Արտընդոստ ճայթէ մըրիկ յամպրոպաց .
 Չայն արկանէ Լաւ . ո՛հ ձայն մօրն հնչեաց .
 « Փութա՛ որդեակ սիրուն , զԼճեւ ած ընդ քեզ ,
 Լա փախերուք 'ի փութորկեալ վըտանդէս » :
 Ըրձանանայ Կայէն 'ի շուրթըն ամփոփ .
 Ի գիրկ պարզեալ մօրըն դիմէ սրտատրոփ .
 Յահ և դալուկն առեալ սարսէ 'ի կոչոյն ,
 Ղիչ մեծ բառնայ , զօղէ 'ի խորըս մայրւոյն :